412-1912 1512-1912

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈՒԲԵԼԵԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԵԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԹՈՒՅԼՏՒՈՒԹԵԱՄԲ

ԾՐԱԳԻՐ

ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ 1500-ԱՄԵԱԿԻ ԵՒ
ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԻ

ՏՕՆԵՑԵԱՑԵԱԼՈՒԹԵՍՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

I

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ուրբաթ՝ հոկտեմբերի 11-ին, երեկոյեան ժամը 5-ին, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ պատգամաւորների և ամբողջ միաբանութեան ուղեկցութեամբ՝ հանդիսաւոր թափօրով իջնում է Մայր Տաճար՝ ներկայ լինելու ս. Թանգմանչաց յիշատակին կատարուելիք նախատօնակին։

*
* *

Շաբաթ՝ ս. Թարգմանչաց տօնին, հոկտեմբերի 12-ին, առաւօտեան ժամը 8-ին հանդիսաւոր երթ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե. կաթուղիկոսի Օշական՝ ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և պատգամաւորների։

Պատարագ (10-ին) ս. Մեսրոպի գերեզմանի վերայ։

Հոգեհանգիստ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին. պատգամաւորների բանախօսութիւններ։

Ճաշ (2-ին). ուղերձների ընթերցում։

*
* *

Կիրակի՝ հոկտեմբերի 13-ին ժամը 9-ին Մայր Տաճարի Իջման սեղանի վերայ հանդիսաւոր պատարագ և ապա Հայրապետական մաղթանք։

Պատարագից յետոյ՝ ժամը 12-ին, Ճեմարանում ցերեկոյթ երգեցողութեամբ և երաժշտութեամբ։

Ճաշ՝ ժամը 3-ին. հեռագրերի ընթերցում։

Շաբաթ եւ կիրակի երեկոները ժամը 7-ին և երկուշաբթի առաւօտեան 10-ին՝ ճեմարանում գիտական բեֆերատներ և խորհրդակցութիւն ուղղագրութեան խնդիրների շուրջը։

Ծանօթ. Շաբաթ և կիրակի երեկոները երաժշտութիւն և հրավառութիւն Վանքի և Ճեմարանի բակում։

II

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԻ

ՏՕՆԱԿԱՐԳԸ

ՀԱՅՈՑ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐՈՒՄ

Շաբաթ, հոկտեմբերի 12-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը՝ եկեղեցական դասի, դպրոցական ամբողջ կազմի, և ազգային հաստատութիւնների ներկայացուցիչների և աշակերտութեան ներկայութեամբ՝ հանդիսաւոր պատարագ և բացատրութիւն երկու մեծ տօների պատմական նշանակութեան։

Հոգեհանգիստ գրի և տպագրութեան արուեստի վաստակաւորների յիշատակին։

*
* *

Կիրակի՝ հոկտեմբերի 13-ին հանդիսաւոր պատարագ և ապա Հայրապետական մաղթանք նոյն կազմով։

Նոյն օրը՝ տեղական պայմաններին նայելով, կազմակերպել գրական և երաժշտական ցերեկոյթ կամ երեկոյթ՝ եկեղեցական, կրթական և այլ ազգային հաստատութիւնների պաշտօնատար անձանց ներկայութեամբ։ Հանդէսը բանալ «Հայր մեր»-ով և ս. Թարգմանչաց կամ ս. Էջմիածնի շարականով։

Ծանօթ. Շատ եկեղեցիներ ունեցող կենդրոններում եկեղեցական հանդէսները կարող են կատարուել մի կամ մի քանի եկեղեցիներում՝ տեղական Հոգևոր Վարչութեան կարգադրութեամբ։

Այս ծրագիրը կազմուած է յատուկ ս. Էջմիածնին ենթակայ հաստատութիւնների համար։ Միւս բոլոր հաստատութիւններից խնդրում է պատուել այս Համազգային մեծ տօնը պատշաճաւոր հանդէսներով եւ յաւելուածացնել բարենպատակ ձեռնարկութիւններով։